


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
 Գուլիարիոյ համար
 ճարեկան ֆրբ. 10
 Վեցամսեայ " 5
 Արտասահման
 ճարեկան ֆրբ. 12
 Վեցամսեայ " 6
 ԿԱՆԻՒԿ



Գրութիւնք ետ չեն
 տրուիր

Հասցէ
 DIRAN PAPAZIAN
 RUE DRAGOMAN
 K. STEPAN
 (BULGARIE) VARNA

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԷՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Երբ կ'ուզե՛ք «Հայեցի» ին մեջ ապրու ետեւնայ,

Պարտիք սիրուն եւ ազնիւ դիմք մը ունենայ:

ԱԶԳԱՅԻՆ

(ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱՐԵՐ)

Տօքթ. Խօրատանճեան՝ Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձու թեան աշխատութեանց մէջ իր ունեցած գործօն մասնակցութենէն զատ, այս անգամ նիւթական կերպով ալ օգտակար կը հանդիսանայ նորակառոյց շէնքի գեղարանին ամբողջ ծախքը ինքը հոգալով, ի յիշատակ իր հանգուցեալ հօր Խօրատանճեան Պետրոս Ամիրայի: Հոգաբարձութիւնը այս կարեւոր նուիրատուութեան յիշատակութիւնը կրող արձանագրութիւն մը պատրաստել կու տայ որ պիտի զետեղուի գեղարանին ճակատը:

— Բերայի Գալեօնճու Գուլուպ թաղի գեղագործը Պ. Լինարտօ Վարդալիտի, ազգաւ լատին, որ իր ունեցած փոքրիկ խնայողութիւնները միշտ կը շահագործէր հայ եկեղեցիներու փոխ տալով զանոնք, վերջերս մեռեր է, և իր կտակը բացուելով տեսուեր է թէ Ազգ. Հիւանդանոցին 100 օսմ. ոսկի և Ազգ. Ս. Յակոբայ Արքանոցին 50 օսմ. ոսկի կտակած է:

— Գատըղիւզի և Բերայի Թաղ խոր հուրդները Մնունդի տօներուն առթի հազուատ եւ կոշիկ բաշխեր են իրեն շրջանակներու. 150ի չափ երկսեռ աղքատ հայ տղայոց:

— Ի նպատակ Ազգ. Հիւանդանոցի, նուազահանգէս մը տալ որոշուած է անցեալ տարուան պէս:

Նոյն հաստատութեան յիմարաբոյժ Թօքթ. Մօնճէրիի պատրաստած մէկտեղեկագրէն կը հասկցուի թէ, հիմա հին կը պատասպարուին 282 յիմարներ, որոնցմէ 192 այր եւ 90 կին:

— Ս. Պատրիարքը Կաղանդի երկրորդ օրը Բերայի եկեղեցւոյն մէջ քարոզ խօսելով, իմացուց թէ, «Նոր դարը որ պիտի սկսի 1901ին, նոյն տարին պիտի տօնենք Ս: Գրիգոր Լուսաւորչի Խորվիրապէն ելլելուն տասնըվեցերորդ հարիւրամեակը, որ մեր հոգեկան լուսաւորութեան ալ թուականն է»:

— Կարինէն կը գրեն թէ տեղւոյն և շրջակայից Ամերիկեան միասնարին կիւնը՝ տիկին Սթէքէլթըն որ վկայեալ Թօքթորուհի մըն է, ճրի բժշկութեամբ շատ օգտակար կը հանդիսանայ տեղւոյն հիւանդ և աղքատիկ դասակարգին:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն



ԵՒՐՈՊԱՅԻ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Բեդերսպուրկ. 4 Յունուար — Ռուսիա վերջնապէս գրաւեց Բորէայի Մալամբո նաւահանգիստը :

Օտեսա. — Հարաւային զինուորական շրջանակներու հրամանատարները Բեդերսպուրկի սպայակոյտէն հրահանգ ստացան յունվար 17էն առաջ մանրամասնօրէն տեղեկագրել թէ ո՞րչափ զինուոր ունին :

Վիեննա . — Աւստրիոյ մայրաքաղաքին մէջ երկիւղ տիրել սկսած է թէ մի գուցէ Հարաւային Արիւկէի պատերազմը եւրոպական ծանր շփոթութիւններու պատճառ ըլլայ: Վիեննայի մէջ կասկածով կը խօսին վերջին զէպքերուն վրայ որոնք են Գերմանական նաւերու գրաւումը և Ռուս զինուորներու յառաջացումը դէպի Աֆղանստանի սահմանագլուխը: Նոյե ֆրայե Բրեռե կը յուսայ թէ Անգլիոյ խորհրդարանը պիտի պնդէ որ կառավարութիւնը շուտով աւարտէ պատերազմը, վասն զի խաղաղութիւնը փրկութիւն մը պիտի ըլլայ աշխարհի բոլոր ազգերուն համար: Կրէ նաև թէ Անգլիոյ Հնդկաստանի ստացուածքները վտանգի տակ են և թէ բուն իսկ իր օգտին համար պարտի հաշտութիւն կնքել:

Բեդերսպուրկ. — Ռուս լրագիրները կը սեն թէ Բորթուկալ չի կրնար Տէլախայի ծովածոցը Անգլիոյ տալ, որչափ ատեն որ տեւէ պատերազմը: Բորթուկալ եթէ այդպէս ընէ, չեզոքութիւնէն շեղած պիտի ըլլայ, որով Եւրոպական միւս տէրութիւններն ալ կարգ մը միջոցներու պիտի գիտնն :

Լոնտոն . — Խորհրդարանին բացման առտեն կառավարութիւնը քսան միլիոն ազդիական ոսկիի նոր վարկ մը պիտի խնդրէ անգլեթերանաւարկան պատերազմին պէտքերուն համար:

Գանձային նախարար Պ. Պալթուր իր երկրորդ ճառով, զոր խօսեցաւ Մանչեսթըրի մէջ, ի մէջ այլոց ըս ւ թէ՝ «Նախարարութիւնը իր գէժը ունեցաւ տարօրինակ խնդիր մը որ բոլորովին տարբեր է ցամաքային երկիրներու սպայակոյտներու ներկայացուցած խնդիրներէն: Աշխարհի պատմութեան մէջ առաջին

ըլլալով Անգլիա իր գէժը ունի թշնամի մը որուն բոլոր զինուորները ՀԵԾԵԱԼ են: Անգլիա պատերազմի ձեռնարկեց չունենալով բաւականաչափ հեծեալներ զոր քիչ ատենէն պիտի ունենայ:»

Նիւ Եորք — Նախագահ Մար Բինլի Լոնտոնի ամերիկեան զեպանին հրահանգ տուաւ անգլիոյ կառավարութիւնէն պահանջելու որ չեզոք Ամերիկայի առեւտուրին չի գպչի:

Կեդրոնական Ասիա . — Ռուս կառավարութիւնը զինուորական շարժման փորձ մը կատարելով հաստատեց թէ կորիլի է ութ օրուան մէջ կովկասէն մինչև Աֆղանստանի սահմանադրուելը զինուոր զմկել:

Սօֆիա . — Նիգոլա Բ. կայսրը Ծնունդի առթիւ իր լուսանկարը եւ սեղանի արծաթեայ սպաս մը նուէր զրկեց Պարիս Իշխանին:

ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆՆԵՐ

Չը գիտեմ, ընթերցող, գո՞յժ պիտի սեպես թէ աւետիս, երբ իմացնեմ քեզի սունկի պէս բունիլը նոր գրագէտներու, որ մօտաւորապէս պիտի ողողն արտասահմանի հայ հրատարակը: Հիւսիսէն, հարաւէն, աշխարհիս չորս կողմէն գրական նմոյշներ պիտի հասնին մեզի, որով իրաւցնէ պիտի նսեմանալ ոսկէ, կամ արծաթի դարերուն փառքը և ալ այդ դարերուն համբաւի ահագին շէնքին վըրայ շարաբազուութիւնը պիտի հեծնայ տըխրատեսիլ, (ականջը խօսի Վառնայի Շաւարշին), «ու հեծեմանքներու ովկէանին մէջ հէ՛ք հայութիւնը պիտի կազմալուծուի» (Գամէր Արշաւիր պիտի հաւնի՞ արդեօք): «Պատերուն վրան աֆիշներով պիտի գոցուին» (Բարիկի աւմեն վերջին մօտան): «Այնու ամենայնիւ» (Վարդուն չի նախանձի) հին ոճը, հին բաւերը հալածական պիտի վտարուին հրապարակէն: Տէրբային սեռի խնդիրի պաշտօնը պիտի կատարէ (ալա Սոկրատ) և սեռի խնդիրն ալ կըրաւորականին հետ պիտի պլլուէ

այնպէս, ինչպէս Պօօրները Անգլիացիներուն
ու այսպէսով պիտի կազմուի վերջնականապէս
Հայ գրականութեան հոյակապ ներկայնա-
կութիւնը . . . :

Աչքերնիս լոյս ըլլայ թէ գուրս, իրողու-
թիւնը այն է, որ արդէն գտնուածներուն
վրայ տասնեակ սպանդանոցներ ալ պիտի ա-
ւելնան և պիտի սկսին ատոնց մէջ անխնայ
մորթուիլ մարդը՝ գաղափարին, անձը՝ ըսկզ-
բունքին և որ աւելին է անմեղը՝ մեղաւորին
հետ անանկ սառն անտարբերութեամբ մը
որ չի կրնար սահմանուիլ սոսանց նոյն իսկ
այդ սպանդանոցներու ճարտարապետներուն
զիմելու (իմա՛ արտասահմանի թերթերը):

*
**

Կաթողիկոսը ամենէն իւրաքանչեւ կտորն է:
Նորէն ազատականութեան հոլմէ է, որ պի-
տի փշէ Անոր հրեային: Կովկասեան խորշակ-
ներ անոր մէկ քանի փառաց գափնիներն ալ
պիտի շորցունեն ու գէպի հտե քայլ մըն ալ
սունել պիտի տան խնդճ ծերունիին:

Իր կեանքը կեանք չէ և զիտակս չը զօ-
րեր այս ահարկու իստանաշիթութեան մէջ
որոշակի տեսնելու թէ Հայրիկ գոնէ այն տեղ
պիտի թաղուի, ուրտեղ ապրեցաւ իբր վար-
ժապետ, իբր վարդապետ, իբր վանահայր և
Պատրիարք, թէ ոչ շատ հեռին ու սրտերէ
գուրս: Ո՛վ չը գիտեր թէ Հայրիկ մինչև իր
Կաթողիկոսութիւնը սրտերու մէջ ապրած էր,
բայց աւա՛ղ, Կովկասեան լեռնաշղթային մէջ
Տաճկահայոց մեծ գործիչներու գիակին հա-
մար ծաղիկներ չեն ցանուիր, եթէ ատոնք ի-
րենց կենդանութեան հպարտ կուրէն լոգանք
մը առած ու Գաշնակցութեան Պրոպատիկե-
ին մէջ մկրտուած չեն նախապէս:

Ռուսահայեր, Հայրիկը Ձեզ սուինք իբր
սրտերու Կաթողիկոս: Նա՛ ժողովուրդի սրտին
մէջ Կաթողիկոսականէն աւելի մեծ գահ մը
ունէր. տեսնենք պիտի կրնա՞ք խախտեցնել
այդ գահուն հաստատուն հիմերն ալ: Ան
ատեն, պոսովօ՞ ձեզի:

*
**

Ընթերցո՛ղ, գուշակութեանս այսօրուան
էջն ալ փակելով, կը խոստանամ Քեզ ուրիշ
մարգարէութիւններ, որոցմով լեցուն է տա-
կաին պայուսակս:

ԲՈԹՈԹԻԿԻՆ ԳԱԶԱՄԻԱՍԸ



Կէյեմ Ախսիսէսէն Տե՛վալ

Սէրհօշուղա գարշը քարոյ վերէն վար-
դապետին պիրի՝ քէնտիսի նամիղաճըմ տէյե-
րէք կէճէ կիւնտիւզ բէրինելի գօնեագը ալ
սու իլէ տէվամ իտէճէք տիր:

Պիր շէհիրտէ ուֆագ չօճուգլարա պիր
հասթալլգ գուհուր իտուպ, հիւքիւմէթ՝
հողընըզ մանկապարտէզլէրին գարանմասընը
էմր իտէճէք տիր. անճագ, պիր միլլէթին
շէհրի մէզքիւր հոգաբարձութիւնու իտարէ-
սինտէ պուլունան մէքթէպլէրի թէքմիլ գա-
բայաճագ վէ պէջիւք շակիրտլէր տախի այ-
լլարլա սէրսէֆիլ սօգապլարտա կէզմէյէ մէճ-
պուր օլաճագլար տըր:

Ձէշմինիզ ըիւշան օլտուն, պու սէնէ հաս-
թալլգ շօղ օլմայուպ, պու սայէտէ միւսաա-
տէլէրի օլաճագ պիր թագըմ սօգթօրլար
վարժապետլիք մէմուրիյէթինի տէրուհտէ իտէ-
ճէքլէր տիր:

Պիր մեռելոց կիւնիւ՝ գերեզմանս կիտէն
պիր գաշ սգաւոր գատընլար՝ մէզարըն եա-
նընտա օթուրուպ գօնու գօնշույու ֆասլ իթ-
մէք իչիւն օլ տէրէճէ տէրինէ վարաճագլար
քի՛ պէրապէրլէրինաէ «հոգու հաց» նամըլլա
կէթիւրմիւշ օլտուգլարը էքմէք՝ վէ հէլվա
չըգընընըն վէլէտիգնա չօճուգլար թարաֆըն-
տան ուշուպ կիթմէսինի կէօրէմէյէճէքլէր
տիր:

Պուլկարիսթանտա պուլունան ումուճ
ապպային մէքթէպլէրիմիզէ պու սէնէ տախի
միլլէթտաշարըմըզ թարաֆընտան ազտանալ
սէնէվի 70—80 պին ֆրանք սարֆ օլունա-
ճագ իսէ տէ, հայֆա քի օնլարըն հիչ պի-
րիսինտէն նիւմուլէք օլտուն պիր շրջանաւարտ
պիլէ չըգմայաճագ տըր:

Կէօրիչօրմըսընըզ գագամիա պապանըն
պուլուշլարընը:

Զ Ա Ն Ա Չ Ա Ն Ք

20րդ դարը ե՞րբ կը սկսի . — Աստ պէտք եղածին պէս պատասխանելու համար բաւական է հարցնել թէ տասը թիւը քանի՞ միութիւններէ բաղկացած է, իննէ՞ թէ տասնէ . և հարիւրը բաղկացած է 99 միւլորներէ՞ թէ 99 + 1 թիւերէ : Եթէ ամենքին համար յայտնի է թէ 10 թիւը կը պարունակէ իր մէջ 10 միւլորներ և ոչ ինը, և թէ՛ 100 թիւը 100 միւլորներ կը պարունակէ և ոչ 99, պէտք է ուրեմն որոշել ու պնդել թէ դարը 100 տարին կը պարունակէ, հետևաբար 1900ը 19րդ դարու վերջին տարին է և ոչ 20րդ դարու առաջին տարին : Եւ արդէն այս շահեկան խնդրոյն վրայ, Եւրոպայի ամենէն մասնագէտ մարմինն իր վճիռը արձակեց այս օրերս : Գիտէք որ Բարիլի երկայնութեանց դիւանը (պիւստէ լոնկիթիւտ) Աստղաբաշխութեան, Նաուուղուութեան և Թուականներու ճշտութեան համար ամենէն ձեռնհաս մարմինն է, որ ամեն տարի կը հրատարակէ Եւրոպայի ամենէն կարեւոր Աստղաբաշխական Տարեցոյցը : Արդ, այս մարմինը իր 1900ի Տարեցոյցին գլուխը (*ausgabe*) զոր կազանդին օրը հըրատարակեց, սա ազգը գրած է . — «Տասնըիններորդ Գարը պիտի աւարտի 1900 գեկտ 31ին : Քսաներորդ Գարը պիտի սկսի 1901 Յունվար 1ին :» — : Լմեցա՛ւ : Հետևաբար մենք Նոր Տարին կը շնորհակտենք և ոչ թէ Նոր Գարը :

X.

Նոր տարին եւ Աւստրիական մամուլը . — Նոր Տարին տօնի օր մը եղաւ Աւստրիական թերթերուն համար : Ինչպէս յայտնի է, ասոնք լրագրական դրոշմի ենթարկուած էին Թուրքիոյ թերթերուն պէս : Արդ, Խորհրդարանին որոշմամբ այս տուրքը ջնջուցաւ Յունվար 1էն սկսկալ :



ՕՐՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔ

Որքանձի (Փիլոսոֆիա) ջնջումը ազատեղով (մայտանս) . — Այգեպան մը յաջողած է իր խաղողի տունկերը պահպանել միմիայն ազատեղով մշակելով անոնց մէջտեղը, մինչ շատ մը գրացի այգիներ իրենց որթատունկերը զոհ կուտային որթածձիին : Ինչպէս այգեպանը կը յայտարարէ, ազատեղի հօտը կը հեռացնէ կամ կը ջնջէ որթածձին : Ամեն մարդ գիտէ դարձեալ, որ ազատեղը կը մնայ միշտ կանաչ եւ երբէք ենթակայ չէ վնասակար միջատներու յարձակումին, բան մը՝ որ անտարակոյս, իր ջնջիչ յատկութեան կը պարտի :

Հաւկիթի կեղեւները . — Ամենքդ այ, իբր անօգուտ բաներ կը նետէք զանոնք. սակայն մտիկ ըրէք թէ որքան օգտակար ծառայութիւններ կը մատուցանեն : Մանրեցէք զանոնք փոշիի նման և խառնեցէք ձեր հորթերուն և քուսակներուն տուած խոտին հետ, երինջները սքանչելի կը դառնան, եւ քուսակներու մեծնալը զերծ կը լինի ամեն վտանգէ :

Ս Ի Ր Ա Յ Ի Ն Կ Ա Յ Մ Ե Ր

Հ Ա Շ Ի Ի Մ Ը

Ա.Ռ. ԻՉԱՐ . . .

- Անցած նոր տարի
- Եւ քեզի քերի
- Ակով զարթարուն
- Ընծայ մը սիրուն .
- Ու դուն խոսուցար
- Մեկի տեղ հազար :
- Գարնան օրերուն
- Յոյսերով զեղուն
- Դաշտերէն քերի
- Ծաղիկներ քեզի .
- Ու դուն խոսուցար
- Մեկի տեղ հազար :

Ամբան սաք օրեր
 Կարմիր կեռասներ ,
 Տանձ . խնձոր ու դեղձ
 Քերի սիրայեղց .
 Ու դուն խոսացար
 Մեկի սեղ հազար :
 Խառոյ , պաղպաղակ
 Քասրոնի տխակ
 Երեկոյք ու պար
 Յաճախ ունեցար .
 Ու դուն խոսացար
 Մեկի սեղ հազար :

* *


Յիշե՛ս . Ի յարիկ
 Օր մըն աչ յուշիկ
 Համբոյր մը տոի
 Այսիդ վարդալի .
 Ու դուն յեցիր ,
 Սակն ինչ է չքսիր :

* *

Հինա քեզ զրբան
 Ակնագարդ ընծան ,
 Ծաղիկ ու միրգեր
 Պար ու քասրոններ .
 Միայն ես 'ի քեկ
 Համբոյրս կուզեմ :
 Ինչ որ ընծայիկ
 Միրգերուն ծաղիկին
 Քասրոնիկ համար
 Ինծի խոսացար .
 Կուսարդ ըրէ՛
 Պարսփոյ պճարէ :
 Տասն անգամ հազար
 Կընէ սաւ հազար .
 Տոկոսն աչ սարուան
 Բարդեղոյ պրան
 Հաշխոյդ աչայես
 Շոքոյ կը գնես :

ԻԱՅԾ

ՊՈԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ



ԳՐԱԳԻՏՈՒՀԻՆ

Ինչ մը աշխիկ քիչ մը կին և քիչ մըն ալ էրիկ մարդ :

Աւելի շիտակ կըլլար ըսել թէ սեռ չունի :

Խարտեաչ գրագիտունի չէ տեսնուած Պոլոյ մէջ . ամենքն ալ սև մազեր ունին և ընդհանրապէս Իւրգէնի կամ Ասքանազի աշակերտուհիներն են : Առտուները ուչ կարթննան և մարդու չեն հաւնիր :

Ոտանաւորով կը սկսին ու վերջը չեն բերեր :

Կը կարծես թէ գրագէտ ըլլալուն համար զգայնիկ և շղոտ բան մը ունին իրենց մէջ . մինչդեռ սովորական աղջիկներէն կամ կիններէն աւելի տափակ կը գտնես անոնց սիրտը և մանաւանդ կուրծքը :

Իրենց թաղի աղջկանց վարժարանին խնամակալունէն են , եւ ճիշդ Գումագաբուցիներուն պէս կը հագուին :

Ծիածանի ամբողջ գոյները կամ իրենց ոտքնուորներուն մէջ կը դնեն եւ կամ շրջազգեստներուն վրայ :

Եկեղեցի չեն երթար , կարծել տալու համար թէ անասուած են :

Սիրային խնդիրներու մէջ անանկ լըրճուկ բաներ կընեն , որոնցմէ գրել կարգալ չգիտցող մը պիտի գարչէր :

Եթերային արարածներ ըլլալ կը կարծեն եւ ընդհանրապէս անբաններու հետ կամուսնանան :

Ամենքն ալ միեւնոյն նիւթերու վըրայ կը գրեն : Ամենէն աննշանէն ըսկսեալ մինչեւ ամենէն նշանակելին միեւնոյն վերնագրի տակ ոտանաւորներ գրած են :

«Մայրական սէր—Մօտա Պուրնին—Աղբատ երիտասարդը—Արշալոյս—Զեփիւռ—Առ Գոհարիկ—Եթէ ըլլայի . . . —Առ Լուսին—Վարդը—Առաքինի ձկնորսը—Վարագորի սեռէն—Սիրասուն բեռորդիս—Հայրիկիս տունին սաթիւ—Գութ—Բեկեալ սէրը—Սրտիս յոյզերը . . . եւ ուրիշ այս կարգի նիւթեր , որոնք հարիւր մղոն հեռուէն տիրացու կը հոտին :

Քիչ շատ ամեն բանի վրայ կը գը-
րեն ի բաց առեալ կնոջական նիւթերու
վրայ: Երկու ֆուսմանոց գիրքեր կը հը-
րատարակեն եւ ալ հետերնին խօսք չը-
լուիր: Արձակ դրելու սկսածնուն պէս
կը գրնան:

Շիք երեւնալու համար այցելու-
թիւն չեն ըներ, մօտայի գլխարկ չեն
հագնիր, պահք չեն բռներ եւ մարդու
երես չեն նայիր, բայց երբ անգամ մը
նային . . . :

Մինչեւ կարգուելին աղէկ, բայց
յլի մնալնուն պէս, մնաք բարով գրա-
կանութիւն, ոտանաւոր, տաղանդ, գիրք
եւ լրագիր:

Պարտիզակցի ստնտուի պէս ծիծ տալ
կը սկսին, այնպիսի թափթփած կեր-
պով, որ կերգնուս մէյ մըն ալ ոտանա-
ւոր չի կարդալ նոյն լակ եթէ էրիկ մար-
դէ մը գրուած ըլլայ:

ՌԱՏԱՄԷՍ

Ծ Ի Ծ Ա Ղ



ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ

ԱՂԹԻՆԵՐՈՒՆ ՄԱՐՇՐ

(Եղանակ՝ «Պիզ քէօր օղլու եսվրուսոյըղ»)

Հերիք եղբարք որչափ կովու միս
կերանք,
Հերիք աղտոտ իւղով մաշենք մեր
նոր կեանք,
Գետինն անցնին ոչխար ու եզ
զարչելի,
Կեցցէ՛ չոր հաց, սոխ, տոմաթէզ
դալարի
Թէև չունին ոչ համ, ոչ հոտ, ոչ
ճաշակ,
Բայց մեր մարմնոց կուտան կորով
շարունակ:


ՆԻՅՁԱՆ

ՁԵԿՈՅՑ

Տեղի անձկութեան պատճառաւ՝
Բոժոժիկի կողմէ զրկուած Կաղանդչէք-
ներու ցանկը յաջորդ թերթով պիտի
հրատարակենք:

Ն Կ Ա Ր Հ Ա Ն Ո Ւ Կ

Ա



մարդը



էն



Առաջին անսխալ կարգացողին նուէրն
է կատակերգութիւն մը:

Թիւ 143 «Հայելի»ի նկարհանուկը
կարգալ այսպէս.

«Մեծ ու պղտիկ կաղանդի առտուն
գուարթ են»:

16 նամակագիրներէ 5ը անսխալ կար-
գացեր էին, որք են, Տ. Ա. Սթամպոլլուեան և
Ե. Կիւսիւշեան Վառնայէն, Կարապետ Փա-
փազեան և Մ. Գտուեան Ռուսձուրէն, Պ. Մ.
Պոյաճեան Շուսիայէն:

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

Ա Փ Ր Ի Կ Է Ի Խ Ո Ր Ե Ր Է Ն

ԵՐԿՈՒ ՀԱՅԵՐՈՒ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ունկանսայի եւ Պահրէյն կղզիին վրայ
(Շար. և վերջ)

Մօմպասա քաղաքը ճիշդ եզերքին վրայ չէ, այլ փոքր կղզիի մը մէջ ցամաքին խիտ մօտ և կամուրջով մը անոր կապուած : Ունի 15,000ի չափ բնակիչ, մեծ մասամբ բնիկ սևեր և փոքր մասը եւրոպացիներ : Կղզիէն զատ, բուն ցամաքի եզերաց վրայ ալ բնակութիւններ հաստատուած են և քաղաքը երկար շէրք մը ունի ծովեզերաց վրայ տարածուած : Քիչ տարբերութիւն ունի եւրոպական միջնակարգ քաղաքներէ, ուր անդադար կը յոճախեն եւրոպական նաւեր և ընդարձակ առուտուր կընեն փոսկրի, վայրի կենդանիներու, կաշիներու, սիրամարգի եւ շայլամի փետուրներու, ձգախէժի, անգեղջուրի եւ ձիազետիի ատամներու եւայլն :

Իրենց խումբը բազկացած էր մէկ գըլխաւոր երկրաչափէ եւ վեց գրագիրէ, որոնց մէկը ինքը, եւ ութը գործաւորէ որոնք իրենց մէկ տարուան պաշարը միասին առած էին : Հոն գրաստ չգտնելով՝ 300 բնիկ գործաւորներ վարձեցին եւ անոնց առին իրենց կահ կարասին եւ Մոմպասայէն ուղղուեցան Ափրիկէի ներսը, գերմանական ստացուածոց հիւսիսային սահմանները քերելով եւ երեք ամիս հետիոտն ուղեւորութեամբ հասան մինչեւ Անգլիացեոց վերջին զինուորական կայանը Մօրինդի : Ճամբուն վրայ անցան Բուքույու եւ Բալլոնասօ ցեղերու երկիրներէն որոնք արդէն կատարելապէս նուաճուած ըլլալով, որ եւ է թըշնամանք ընելէ զգուշացան անցորդներուն դէմ : Իրենց բեռնակիրներն ալ առանց ճանապարհներն փոխելու եկան իրենց հետ Ուկանտայի վերջին կայանը մինչեւ Մօրինդի, եւ նոյն խի իրենցմէ մէկ քանիներ յոժարեցան հոն մնալ եւ աշխատիլ քիչ մը ստակ շահելու համար, իսկ մնացեալք դարձան Մոմպասա :

Անգլիացիք նպատակ ունենալով իրա-

պէս հաստատել իրենց գաղթային վարչութիւնը Հասարակածի երկիրներուն մէջ, հետզհետէ դէպի առաջ կը տարածեն իրենց զինուորական կայանները եւ այս անգամ ալ նոր կայաններ հաստատեցին Մուլիի մօտ էմին փաշայի լքած տեղերը, եւ մեր ուղեւոր : քարտուղար անուանուեցաւ այդ կայաններէ մէկին մէջ : Նոր կայաններու շուրջը գտնուող ցեղապետները սիրաշահելու համար մեծ մարգասիրութեամբ կը վարուէին անոնց հետ, մինչեւ անոնց երկրին մէջ լաւ մը հաստատուէին : Այնուհետեւ գործը կը դիւրանար :

Նորահաստատ կայաններու վերջինը կը գտնուի Ալպէրթ նիանգա լճին հիւսիսային կողմը, այն երկրին մօտ զոր Անգլիացիք վարձու տուած են Պէլթիացեոց եւ ուրկից դէպի Փաշոտա հազրդակցութիւն հաստատելու համար այս անգամ նոր փորձեր ըրած են նեղուի վերայ : Բայց ջրային բուսեղէնները այնպիսի խիտ և հոծ խաւ մը կը կազմեն ջուրի երեսը որ այն տեղի չոգեծնաակներէն ոչ մէկը յաջողած է այդ խաւը ճեղքել ու անցնիլ : Ուստի առայժմ զայն թռչելով, իրենց բոլոր ուժը տուած են կառուցիներու և երկաթուղիներու շինութեան և արդէն երկաթուղին Մոմպասայէն սկսելով դէպի ներս յառաջացած է մինչև մէկ ամսուան ճամբայ, այնպէս որ մեր ուղեւորը վերադարձին երկու ամսուան ճամբայ ոտքով քայլէ ետքը, մնացած մէկ ամսուան ճամբան դէպի ծովեզրը երեք օրուան մէջ կատարած է երկաթուղիով, զոր Անգլիացիք շինած էին երեք տարուան միջոցին :

Զինուորական կայաններու իւրաքանչիւրը քառանկիւն ամրաշէն բերդ մըն է, զոր կը պահպանեն տասնէն մինչև հարիւր զինուորներ տեղւոյն կարեւորութեանը համեմատ, և զորս կը բաղմապատկեն հետզհետէ քանի յառաջանան երկրին մէջ : Ամեն անգամ որ նոր ձեղի մը բնակավայրը կը հասնին, իրենց առաջին գործը կըլլայ հիմնարկել այդպիսի բերդ մը առասուսձիկներով բանեցնելով տեղացիները եւ այսպէս կապակցելով զանոնք իրենց հետ :

Ամէն աշխարհագրութեանց մէջ կը կարդանք թէ Հասարակածը երկրիս ամէնէն տաք մասն է, ուստի մեծապէս զարմացանք լսելով որ ընդհակառակը այդ հասարակածային երկիրներուն մէջ մշտական զովութիւն կը տիրէ, թէ նեղոսէն զատ ուրիշ շատ մը հոսուն ջուրեր կան եւ թէ հարիւրամասն ջերմաչափը քսանէն վեր չելլար: Կերեւայ թէ այդ զովութիւնը առաջ կուգայ երկրին գիւքին բարձրութենէն որ բոտ նոր հաշուի եօթը հազար ոտք վեր է ծովու մակերեսէն:

Անգլիական կնիանները իրենց շուրջը իբրև ուտելիք մսէ զատ բան չեն կրնար գտնել, ուստի անդադար պաշար կը զըրկուի իրենց Եւրոպայէն եւ Հնդկաստանէն. եւ թէպէտ երկիրը անօրինակ կերպով յուսթի է բայց մշակութիւն բնաւ չի կայ, վասն զի տեղացիները կիսաօւայրենի վիճակի մէջ կը գտնուին եւ ամենամեծ մասը բոլորովին մեղ կը շրջի. քիչերը մշայն իրենց զգեստ կը շինեն ծառի կեղեւներէ կամ անասնոց մորթերէ:

Նոր սկսած են տեղտեղ փոքր ինչ հողագործութիւն բնել անգլիացի պաշտօնէից յորդորանք: Բանջարեղէն գըրեթէ բնաւ չի կայ, այլ միայն լոլիկը որ անհաւատալի կերպով առատ է իւրաքանչիւր կայանի շուրջը: Զարմանք հարցուցինք պատճառը և սա բացատրութիւնը արուեցաւ մեզի. — Արովհետեւ իբրև պաշար զրուած պահեստի կերակուրի խիստ շատին մէջ լոլիկ կայ. որոնց սերմերը ուտուելէ յետոյ . . . կը դառնան հողին և երկիրը այն աստիճան բարեբեր է որ խկոյն այդ սերմեր կը ծլին ու կ'աճին:

Մարդակեր' երու վրայ հարցուցինք և պատասխան տալանք թէ միայն Նիամ' Նիամ' ցեղն է որ այդ դարչելի սովորութիւնը գեռ կը պահէ և շատ համեղ կը գտնէ մարդկային միսը, մանաւանդ մարդոց ձեռքերն ու ոտքերը, ինչպէս անգլիացի պաշտօնակալի մը պատմած է անոնցմէ մէկը որ կերևայ թէ բազմիցս առիթ ունեցած էր անկէց ճաշակելու: Նոյն այդ տեղացին տեսնելով որ Անգլիացիք իրենց կայա-

նին մէջ փռու մը կը շինեն, ամենայն լրջութեամբ առաջարկած է չի մոռնալ խորշ մը յաւելուլ նաև ի հարկին մարդ եփելու համար: Սակայն տարակոյս չի կայ որ քիչ ատենէն այդ ամենը պիտի փոխուին, որովհետև Միսիոնարները անխոնջ կը գործեն ամեն կողմ և մէկ կողմէ հասակաւորները դարձի բերելով, միւս կողմէ կը դաստիարակեն անոնց զաւկները:

Անոնց լեզուով դասեր կու տան, քարոզներ կը խօսին և յաջողած են այդ ցեղերու լեզուներով, որոնք քիչ շատ իրարմէ կը տարբերին, բառարան և քերականութիւն չինել:

Պատաստ 20 Նոյ. 99

Ա.Զ.Դ.

Ներկայ 1900ի մէջ հրատարակուելիք «Վարդանանց պատերազմը կամ Վասակ Սիւնի և Վարդան Մամիկոնեան» բնական գործին տպագրութեանը գիւրութիւն մը տուած ըլլալու համար այժմէն բաժանորդագրութիւն մը բացուած է. փափաքողները թող աածին իրենց հասցէները ու բաժնագինը (2 Փր.) զրկել հեղինակին հասցէին:

Արտաշէս Կարապետեան (բօսթ աէսու թանդ) Շուսիս:

Հրատարակութենէ վերջը սոյն գիրքը պիտի ծախուի 2, 70 սանդիմի:

2—10

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թատրերգութիւն 7 արարուած

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԵԱՆ

«Գայլ Վահան» ողբերգութեան հանգուցեալ հեղինակին սցեն. բ. երկն ալ կը յանձնարարուի բանասիրաց ուշադրութեանը: Գինն է 1 Փրանք: Կեղրոնատեղին Վառնա Արևելեան տպարան: Օննիկ Բարսեղեան:

Отговорница М. Сконовъ
Печальница „Взаимность“ — Варна.